

ՉՉ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՈՎԱԽԱՅԱՆ ԱՐՏԱԿ ԵՐԶԱՆԻԿԻ

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
(ԲԻԱՅՆԻԼԻ, ՈՒՐԱՐՏՈՒ, ԱՐԱՐԱՏ)
ՍԵՋԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դրոշմի կարգադրում
Կարգադրում
18.03.37թ
Ե. 00.05
Կրտս. Նիկոլայ
ԳՐԻՄ

Պատմագրություն, աղբյուրագիտություն
մասնագիտությամբ

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության
ՍԵՂՍԱԳԻՐ

Երևան - 1997

12-1

Աշխատանքը պատրաստվել է
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Պաշտոնական ընդգրկմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու
Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝
Երևանի Պետական Համալսարանի
Հայոց Պատմության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 1997թ. հոկտեմբերի 17-ին,
ժամը 14-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական աստիճաններ շնորհող պատմության բնագավառի
006 մասնագիտական խորհրդի նիստում(հասցեն 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 1997թ. սեպտեմբերի _____-ին

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար
պատմական գիտությունների թեկնածու
Ս. Վ. ԲՈՍՅԱՆ

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը:

Աշխատանքի արդիականությունը:

Ինչպես ողջ Հին Արևելքի, այնպես էլ Հայաստանի մշակույթի
պատմության մեջ կարևոր և նշանակալի երևույթ է Վանի
թագավորության մեհենագրությունը: Այն Բիայնիլի (Ուրարտու,
Արարատ) թագավորության մեջ կիրառված երեք գրային
համակարգերից մեկն է, ընդ որում, ի տարբերություն մյուս
երկուսի (ասորեստանյան և տեղական սեպագիր համակարգերի),
մեհենագրությունը ստեղծվել և զարգացել է Հայկական
լեռնաշխարհում:

Ներկա ատենախոսական հետազոտությունը նվիրված է
Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրությանը:
Նրանում նախ ներկայացվում է այդ գրային համակարգի
ուսումնասիրության պատմությունը, ապա հավաքված ողջ նյութի
հիման վրա փորձ է արվում մանրամասնորեն վերականգնելու
խնդրո առարկա գրային համակարգի ընդհանուր բնութագիրը:
Այնուհետև աշխատանքում կանգ է առնվում վերծանության
հիմնախնդրի վրա, քննարկվում են այդ ուղղությամբ արված
նախկին փորձերը, որից հետո հանգամանորեն շարադրվում է մեր
կատարած վերծանության փորձը:

Վերծանության ուղղությամբ ստացված առաջին
արդյունքները որոշ հիմք են տալիս դատելու մեհենագրության
լեզվի խնդրի մասին, որին նվիրված է հատուկ մի գլուխ:
Քննարկվում են գրային համակարգի ծագման և
նախամաշտոցյան Հայաստանում կիրառված գրերի ընդհանուր
համակարգում վերջինիս գրված տեղի խնդիրները:

Ամփոփումից հետո հավելվածում բերված են Վանի
թագավորության մեհենագրերի նշանացանկն ու
արձանագրությունների (գրակիր նյութերի) ժողովածուն, որոնք
կարևոր նշանակություն կունենան գրային համակարգի հետագա

ուսումնասիրության գործում:

Վանի թագավորության մեհենագրության հետազոտությունն ընդհանրապես և սույն աշխատանքը մասնավորապես կարևորվում են մի քանի առումներով: Հայագիտության համար այն արժևորվում է նախամաշտոցյան Հայաստանում սեփական գրի ու դպրության խնդրի քննարկմամբ և մշակութային մի դարաշրջանի վերհանմամբ: Հին արևելագիտության տեսանկյունից այս գրային համակարգը կարևոր է ընդհանուր առաջավորասիական մշակութային տարածաշրջանում ունեցած կապերի, փոխառնչությունների և այլ նկատառումներով: Իսկ աշխարհի գրային համակարգերի ուսումնասիրության (գրամմատոլոգիայի) առումով այն նախ և առաջ արժեքավոր է իբրև գրի ծագման ու զարգացման ինքնուրույն և յուրահատուկ օջախ:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Վանի թագավորության մեհենագրության ամփոփ ուսումնասիրության վերջին (և, ըստ էության, միակ) փորձը եղել է Ռ.Գ.Բարենթի 1974 թ. հրատարակված ոչ ծավալուն մի հոդվածը, որն իր ժամանակին էլ չէր ներառում հայտնի ողջ նյութը և այսօր, առավել ևս, հեռու է լիակատար լինելուց: Սույն աշխատանքի նպատակն է եղել համակողմանի ուսումնասիրության ենթարկել խնդրո առարկա գրային համակարգը, վերջինիս հետազոտությունը դնել հաստատուն հիմքերի վրա: Այս նպատակին հասնելու համար, ըստ հնարավորին, հավաքվել և համակարգվել են առկա հնագիտական հրատարակված և դեռևս չհրատարակված նյութերը: Փորձ է արված, ըստ հնարավորին, պատասխանելու գրային համակարգի բնութագրի, ծագման, վերծանության, լեզվի և այլ հարցերին:

Աշխատանքի տեսական և մեթոդական հիմքերը, աղբյուրները ու գրականությունը:

Մոռացված գրերի և լեզուների ուսումնասիրության ասպարեզում (սկսած Գ.Գրոտեֆենդից, Ֆ.Շամպոլյոնից, Հ.Ռաուլինսոնից և ուրիշներից) մշակվել են տեսական ու մեթոդական հիմքեր, որոնք ընդհանրացվել և ի մի են բերվել Փ. Աալթոյի, Ի.Գելբի, Յ.Ֆրիդրիխի, Պ.Սերիջիի, Ի.Դյակոնովի, Դ.Շմանդթ-Բեսսերաթի և այլոց հիմնարար հետազոտություններում: Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրության ընթացքում հաշվի են առնվել այն հարուստ տեսական ու մեթոդական ավանդույթները, որոնք մշակվել են վերջին երկու հարյուրամյակների ընթացքում:

Ուսումնասիրության համար աղբյուր են ծառայել հնագիտական պեղումների մասին Հայաստանում և արտասահմանում հրատարակված գրականությունը, աշխարհի զանազան թանգարանների բիայնական հուշարձանների մասին հրապարակումներն ու կատալոգները, Հայաստանի Հանրապետության մեծ թանգարաններում պահվող չհրատարակված նյութերը, որոնք առաջին անգամ հրատարակվում են այս աշխատանքում:

Աշխատանքի գիտական նորությունը:

Բացի առկա նյութերի հավաքումից և համապարփակ ուսումնասիրությունից (որն իր ընդգրկմամբ աննախադեպ է այս բնագավառում), աշխատանքի կարևոր արժանիքը Վանի թագավորության մեհենագրության վերծանության սկզբնավորումն է, դրանից բխող եզրակացություններով հանդերձ: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում վերծանվել և մեկնաբանելի են դարձել շուրջ հինգ տասնյակ մեհենագրեր, ընթերցվել են չորս անձնանուն, մի քանի

դիցանուններ, քաղաքանուններ և հակիրճ նվիրատվական արձանագրություն-արտահայտություններ: Վերծանված մեհենագրերի ուսումնասիրությունն, ըստ ակրոֆոնիայի և «հնչյունային ռեբուսի» սկզբունքների, թույլ է տալիս մեծ հավանականությամբ ենթադրելու բիայան-ուրարտական մեհենագրության հայալեզու լինելը:

Աշխատանքի քննարկումն ու պաշտոնական արժեքավորումը:

Աշխատանքի առանձին դրույթներ և հատվածներ զեկուցումների ձևով ներկայացվել են Երևանում (Հայաստանի պատմության պետական թանգարանում, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, ՀՀ ԳԱԱ Պատմության պրոբլեմների խորհրդի նիստում, Երիտասարդ արևելագետների հանրապետական XVII և XVIII կոնֆերանսներում) և Մոսկվայում (ՌԴ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում): Թեմային առնչվող հարցերի վերաբերյալ հրատարակվել և հրատարակության ընթացքի մեջ են մի շարք հոդվածներ և զեկուցումների թեզիսներ: Աշխատանքն ամբողջությամբ մասնագիտական քննարկման է ենթարկվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Սեպագրական քաղաքակրթությունների բաժնի ընդլայնված նիստում:

Աշխատանքի կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է նախաբանից, հինգ գլուխներից, վերջաբանից, գրականության և համառոտագրության ցանկերից, հավելվածից: Վերջինս ընդգրկում է բիայան-ուրարտական մեհենագիր արձանագրությունների ժողովածուն՝ բացատրագրերի բաժնով, և նշանացանկը: Աշխատանքն ունի անգլերեն լեզվով համառոտ ամփոփում:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը:

Նախաբան: Աշխատանքի ներածական խոսքում Վանի թագավորության մեհենագրության համառոտ ներկայացումից հետո ուրվագծվում են ուսումնասիրության հիմնական շրջանակները: Մի քանի խոսքով ներկայացվում են այն հիմնական տերմինները, որոնք գործածվում են շարադրանքի ընթացքում (վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է մեզանում հիերոգլիֆիկայի ուսումնասիրության ավանդույթի բացակայության մատճառով հստակ մշակված տերմինաբանություն չունենալով):

Նախաբանի վերջում հատուկ շնորհակալություն է հայտնվում բոլոր անձանց և կազմակերպություններին, որոնք որևէ կերպ օժանդակել են հեղինակին ուսումնասիրության պատրաստման ընթացքում:

Գլուխ I. Ուսումնասիրության պատմությունը: Առաջին գլուխը ներկայացված է երեք բաժիններով: Առաջինում տրվում է այն հնագիտական հայտնագործությունների պատմությունը, որոնց շնորհիվ ներկայումս կուտակվել է զգալի քանակությամբ հիերոգլիֆ նյութ: Նշվում է, որ թեպետ բիայան-ուրարտական մեհենագրերով առաջին իրերը հայտնաբերվել են անցյալ դարի երկրորդ կեսին, Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրությունը սկզբնավորվել է մեր դարասկզբին՝ Կ.Ֆ.Լեհման-Հաուպտի հրապարակումներով: Ներկայումս հիերոգլիֆակիր իրեր են հայտնաբերվել ավելի քան երեք տասնյակ հնավայրերից, որոնք տեղադրելով քարտեզին՝ ստանում ենք գրային համակարգի տարածման հետևյալ սահմանները. հյուսիսում՝ Շիրակ և Սևանա լճի ավազան, հարավում՝ Ուրմիո լճի ավազան (ներառյալ բիայնական ազդեցության տակ գտնված Մանա երկրի տարածքը),

արևմուտքում Կայալի դերե (Ներքին Խնձոր) և Տիգրանակերտ:

Երկրորդ բաժնում ներկայացվում են գրային համակարգի ուսումնասիրության ուղղությամբ արված աշխատանքները: Նշվում է, որ ուսումնասիրության սկզբնական շրջանում ենթադրվում էր քիայնա-ուրարտական մեհենագության արևմտյան ծագումը (Կ.Ֆ.Լեհման-Յաուպտ, Լեո, Ա.Քոուլի, Յ.Բոսսերթ, Բ.Բարթեն-Բրաուն), սակայն 1930-40-ական թթ. առաջ քաշվեց նշված գրային համակարգի բնիկ տեղական ծագման տեսությունը (Ի.Ի.Մեշչանինով, Խ.Սամվելյան, Բ.Բ.Պիոտրովսկի), որը զարգանալով ներկայումս ստացել է համընդհանուր ճանաչում:

Առանձին հնավայրերի նյութերի հրապարակումից գատ եղել է խնդրո առարկա մեհենագիր արձանագրությունների հավաքման և ամփոփման երկու փորձ: Առաջինի հեղինակը Լ.Ա.Բարսեղյանն է (1967թ.), որն ի մի բերելով Թոփրաք կալեից և Կարմիր բլուրից հայտնաբերված նյութերը (բացի տարողության և կնիքների վրայի նշաններից), հրատարակեց 97 հիերոգլիֆ: Երկրորդ փորձի հեղինակը Ռ.Գ.Բարնեթն է, որը հավաքել է շուրջ երեք տասնյակ արձանագրություն, կազմել 102 հիերոգլիֆներից բաղկացած նշանացանկ, որն, ըստ արտաքին տեսքի, ենթարկել է թեմատիկ խմբավորման, անդրադարձել գրային համակարգը բնորոշող մի շարք հարցերի: Ռ.Գ.Բարնեթից հետո մեհենագրության համապարփակ ուսումնասիրության փորձ չի կատարվել:

Ուշագրավ է Գ.Ա.Մարտիրոսյանի կատարած աշխատանքը, որն օգտվելով Լ.Ա.Բարսեղյանի կազմած նշանացանկից, համադրել է քիայնա-ուրարտական հիերոգլիֆները Յայաստանի ժայռապատկերներում հանդիպող նմանատեսք պատկերագրերի ու հայկական միջնադարյան մատյաններում վկայված նշանագրերի հետ, ցույց է տվել դրանց գեներտիկ կապն ու հայաստանյան պատկերագրության տարբեր փուլեր լինելը:

Երրորդ բաժինը վերաբերում է մեր կատարած աշխատանքին, որն ընթացել է չորս ուղղություններով.

- ա) հրատարակված գրականության հավաքում և ամփոփում,
- բ) Յայաստանի մեծ թանգարաններում պահվող չհրատարակված նյութերի ուսումնասիրություն և հրատարակման պատրաստում,
- գ) հավաքված ողջ նյութի հիման վրա գրային համակարգի ընդհանուր բնութագրի և այլ հարցերի պարզաբանում,
- դ) վերծանության և մեկնաբանման ուղղությամբ տարված աշխատանքներ:

Գլուխ II. Գրային համակարգի ընդհանուր բնութագիրը: Որևէ անհայտ գրային համակարգի և նրա լեզվի վերծանությունը սկսելու անհրաժեշտ պայմանը տվյալ համակարգի բնութագրական առանձնահատկությունների պարզաբանումն է: Վանի թագավորության մեհենագրային համակարգի ընդհանուր բնութագիրը, որին նվիրված է ատենախոսության երկրորդ գլուխը, ներկայանում է հետևյալ կերպ.

1. Մինչև 1995թ. վերծանության արդյունքները քիայնա-ուրարտական հիերոգլիֆներով գրված որևէ բնագիր չի ընթերցվել (չհաշված տարողության պարզ նշումները): Անհայտ էր նրանց լեզուն, որի համար հավանական են Վանի թագավորության սեպագրերի և երկրում առավել տարածված խոսակցական լեզուները թեկնածությունները: Վերծանության առաջին արդյունքները կողմնորոշման հնարավորություն տվեցին լեզվի խնդրում:

2. Այսօրվա դրությամբ վերծանված և հստակ թվագրվող ամենահին գրակիր հուշարձանները թվագրվում են Բ.ա. IX դարով: Յայտնվել է կարծիք (Ռ.Գ.Բարնեթ), որ այս գրային համակարգի ծագումը կարող է հասնել մինչև Բ.ա. XIV դար: Ամենաուշ թվագրվող գրակիր առարկաները վերաբերվում են Բ.ա. VI դարի սկզբին:

3. Մեհենագիր տեքստերը հանդիպում են կավե սալիկների, կնիքների (և կնքադրոշմների), մետաղյա թասերի ու սափորների, արձանիկների, մեդալիոնների, պաշտամունքային մետաղյա

թիթեղների, ռազմական հանդերձանքի մասերի, կենցաղային ամանների և այլ իրերի վրա: Գրակիր առարկաները հիմնականում պատրաստված են զանազան մետաղներից (զերակշռում է բրոնզը), քարերից և կավից:

4. Ներկայումս մեր հավաքած արձանագրությունների (գրակիր առարկաների) թիվը շուրջ 1000 է: Դրանք ըստ բնագրի կոնտեքստի և այն կրող առարկայի նախատեսվածության կարելի է բաժանել չորս խմբի.

- արքայական իշխանության ոլորտին վերաբերող,
- կրոնա-պաշտամունքային բնույթ ունեցող,
- տնտեսական և կենցաղային նշանակության,
- առայժմ անհայտ իմաստով:

5. Մինչև վերջերս համարվում էր, որ բիայնա-ուրարտական մեհենագրերը չեն հանդիպում բազմալեզու արձանագրություններում: Վերծանության աշխատանքների ընթացքում, սակայն, բացահայտվեց, որ որոշ իրերի վրա հանդիպող բիայնական սեպագիր և հիերոգլիֆ բնագրերը բարգձանում են իրար, այսինքն երկլեզու արձանագրություններ են:

6. Գրության համակարգում ընդունված են եղել աջից ձախ և վերից վար ուղղությունները:

7. Կիրառված նշանների թիվը շուրջ 250 է, ինչը ցույց է տալիս, որ Վանի թագավորության մեհենագրային համակարգը եղել է գաղափարագրերի կիրառմամբ վանկային բառա-վանկային կամ գաղափարահնչյունային (նույնպիսի բնույթ ունի նաև բիայնական սեպագրությունը):

8. Ըստ արտաքին տեսքի հիերոգլիֆները կարելի է բաժանել 10 հիմնական խմբի.

- երկնային մարմինների պատկերներ,
- դիցաբանական էակների պատկերներ,
- մարդատեսք նշաններ (այդ թվում մարմնի առանձին մասերի գծապատկերներ),

- կենդանատեսք նշաններ (նաև մարմնի մասերի),
- բուսատեսք նշանագրեր,
- շինությունների գծապատկերներ,
- զանազան առարկաների պատկերանշաններ,
- թվանշաններ,
- օժանդակ նշաններ,
- անորոշ տեսքով հիերոգլիֆներ:

Այսպիսի խմբային դասակարգմամբ էլ կազմված է մեր նշանացանկը:

9. Թվերը նշվել են կետերով. առկա են 1-9 կետային թվանշանները: Ենթադրաբար կարելի է ցույց տալ նաև «10» և «100» թվերի նշումները:

10. Վկայված են երեք օժանդակ նշաններ, որոնցից երկուսի իմաստն առայժմ անհայտ է: Երրորդը կարող է մեկնաբանվել որպես ավարտանշան:

11. Կիրառվել են որոշիչներ (դետերմինատիվներ), որոնցից առավել լայն տարածում ունեն «արքա» և «աստված» մեհենագրերը:

12. Կան նշանների կցագրման մի շարք դեպքեր:

13. Վերծանությանը, որպես օժանդակ տվյալներ, նպաստում են պեղումների և գրավոր աղբյուրների ուսումնասիրությամբ ստացված տեղեկությունները Վանի թագավորության պետական իշխանության, կրոնի, տնտեսության, մշակույթի, ժողովրդի կենցաղին ու սովորույթների վերաբերյալ:

14. Վանի թագավորության մեհենագրությանը ժամանակակից են բիայնական և ասորեստանյան սեպագիր, խեթա-լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները և Հին Կտակարանի գրքերը, որոնք չափազանց կարևոր տեղեկություններ են պարունակում մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ: Ուրարտական մեհենագրության վերծանության տեսանկյունից հատկապես կարևոր են բիայնական սեպագիր արձանագրությունները, որոնք մեհենագրերի հետ հանդես են գալիս երկլեզու բնագրերում:

15. Բիայնա-ուրարտական մեհենագրությունը համաժամանակյա գրային համակարգերից ամենից ավելի մոտ առնչություն ունի խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի հետ: Իսկ ժամանակագրական ավելի լայն կտրվածքով այն պետք է դիտել որպես հայկական մեհենագրության բաղկացուցիչ մի մաս: Վերջինիս փշրանքները հանդիսացող հայկական միջնադարյան մատյանների նշանագրերը կարող են նպաստել խնդրո առարկա մեհենագրության վերծանությանը:

Գլուխ III. Վերծանության վիճակը: Երրորդ գլուխը ներկայացված է երկու բաժիններով, որոնք իրենց հերթին ենթարկված են ենթաբաժանումների:

Առաջին բաժնում հիշատակվում և վերլուծվում են վերծանության նախորդ փորձերը, որոնց մեջ կարելի է առանձնացնել երկու խումբ: Առաջինի հեղինակները (Կ.Ֆ. Լեհման-Յաուպտ, Բ.Բ. Պիտորովսկի, Ջ.Ս. Ղասաբյան, Չ.Բարնեյ, Է. Ֆոն Շուլեր, Ռ. Գ. Բարնեթ, Փ. Քալմայեր, Ի. Ս. Ղյակոնով) բավարարվել են միայն առանձին նշանների վերաբերյալ մեկնաբանումներ և դիտողություններ կատարելով: Երկրորդ խումբը կազմում են ամբողջական բնագրերի վերծանության փորձերը (Լ. Ա. Բարսեղյան, Ա. Ա. Վայման), որոնք հաջողություն չեն ունեցել: Մինչև 1995թ. մեկնաբանված էին մի քանի (հիմնականում տարողության) նշաններ:

Երկրորդ բաժինը վերաբերում է մեր վերծանությանը, որը ժամանակագրորեն ներկայացված է երկու փուլերով: Առաջին փուլում (1995թ.) հնարավոր եղավ Վանա լճի ավազանից գտնված երկու նվիրատվական բրոնզե թիթեղների վրա վերծանել երեք վանկագիր անուններ (Ինուանի, Իշպուիսի, Սենուա), մի քանի գաղափարագրեր և մեկ օժանդակ նշան: Երկրորդ փուլում (1997թ.) մեզ հաջողվեց բացահայտել, որ սեպագիր և հիերոգլիֆ գրություններ ունեցող մի քանի գրակիր առարկաների վրա առկա են երկլեզու արձանագրություններ: Այդ բացահայտումն իր հերթին

նպաստեց նոր բնագրերի և առանձին գաղափարանշանների ընթերցմանը: Վերծանության երկու փուլերի արդյունքում ընդհանուր առմամբ մեկնաբանվել և վերծանվել են շուրջ հինգ տասնյակ մեհենանշաններ:

Գլուխ IV. Վանի թագավորության մեհենագրության լեզվի խնդիրը: Չորրորդ գլուխը նվիրված է բիայնա-ուրարտական մեհենագրության լեզվի պարզաբանման հարցին, որի հնարավոր լուծման համար հիմք են ծառայում վերծանության արդյունքները: Վերջիններս ցույց են տալիս, որ Վանի թագավորության մեհենագրության մեջ կիրառվել են սկզբնահնչունության (ակրոֆոնիայի) և հնչյունային փոխարինագրման («հնչյունային ռեբուս») սկզբունքները: Այդ սկզբունքների կիրառության դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող գրային համակարգի լեզուն, հավանաբար, եղել է հնագույն հայերենը (խնդրի լուծման նպատակով քննության առարկա են դարձել Վանի թագավորությունում և շրջակա երկրներում Ք. ա. 9-6-րդ դարերում հայտնի բոլոր լեզուները): Վերծանության արդյունքներից բացի, հօգուտ մեհենագրության հայալեզու լինելու են վկայում նաև երկրի տեղանունների մեծ մասի և բազմաթիվ դիցանունների հայերեն ստուգաբանությունը, բիայնական դիցարանի հնդեվրոպական տարրերը և այլ փաստեր:

Գլուխ V. Վանի թագավորության մեհենագրությունը Յայկական լեռնաշխարհի պատկերագրության ընդհանուր համակարգում: Յայկական լեռնաշխարհում գրի ծագման ու զարգացման վերաբերյալ տվյալների ի մի բերումն ու ուսումնասիրությունը, այդ ամենի համատեքստում Վանի թագավորության մեհենագրության տեղի գնահատումը բերում են հետևյալ եզրահանգումների.

ա) գրի առաջացման նախափուլը Յայկական լեռնաշխարհում սկզբնավորվել է քարեդարային

ժամանակաշրջանում և ունեցել է երկու ենթափուլ՝ «առարկայական գիր» և վաղ պատկերագրություն,

բ) պատկերագրության զարգացմամբ՝ սկսած Ք.ա. V հազարամյակից, ձևավորվում է գաղափարագրությունը,

գ) պատկերագրերի զարգացմամբ և պարզեցմամբ Հայաստանում ստեղծվում է գծային գրերի մի համակարգ, որը կիրառվում է Ք.ա. III հազարամյակից մինչև 1-ինի սկիզբը,

դ) Ք.ա. XII-VIII դարերում լեռնաշխարհի արևմուտքում Եփրատի հովտում, գործածվում է խեթա-լուվիական հիերոգլիֆիկան, որի նշաններին բնորոշ է նկարային ոճը,

ե) Ք.ա. IX-VI դարերում հայաստանյան պատկերագրության հիմքի վրա, կրելով խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի ազդեցությունը, ստեղծվում և կիրառվում է Վանի թագավորության մեհենագրությունը,

զ) առաջժամ անորոշ է մնում հետքիայնական դարաշրջանում, մինչև քրիստոնեության ընդունումը հայաստանյան մեհենագրության գործածության բնույթը. կարելի է ենթադրել, որ այն սահմանափակվել է մեհյաններում,

է) քրիստոնեության ընդունումից հետո հայկական մեհենագրության գործածությունը հայոց նախաքրիստոնեական կրոնի հետ արգելվում և հետապնդվում է: Չնայած դրան, մեհենագրերը որպես «մոզական, կախարդական» նշաններ, մինչ օրս շարունակվում են Հայաստանում կիրառվել իբրև հմայական գրչության ձևեր: Մեհենագրերն առանձին գաղափարանշանների ձևով շարունակվում են գործածվել իբրև արհեստագործ վարպետների նշաններ, հայտնվում են Կիլիկյան Հայաստանի դրամների վրա, առանձին ցուցակներով վկայվում են հայկական միջնադարյան մատյաններում, որոնցում նշանների դիմաց կան նրանց բացատրությունները:

Այսպիսով, ստեղծվելով Ք.ա. V-IV հազարամյակներում և տարբեր դրսևորումներով կիրառվելով մինչև այսօր, հայաստանյան պատկերագրությունը՝ հայկական

մեհենագրությունը, ըստ ամենայնի, ներկայանում է իբրև աշխարհի ամենաերկարակյաց գրային համակարգը: Վանի թագավորության հիերոգլիֆիկան Հայկական լեռնաշխարհի պատկերագրության զարգացման երրորդ փուլն է:

Վերջաբան: Վերջաբանում շարադրված են ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարված եզրահանգումները, նշվում են և՛ այն բացթողումներն ու թերությունները, որոնք առկա են խնդրի ուսումնասիրության ներկա փուլում, և՛ այն նվաճումները, որոնք նոր հեռանկարներ են բացում թե՛ ուսումնասիրության հիմնական նյութի, թե՛ հարակից այլ խնդիրների լուծման ճանապարհին:

Հավելված: Աշխատանքի վերջում, իբրև հավելված, բերվում են Վանի թագավորության մեհենագիր արձանագրությունների ու մենանշանների ժողովածուն և նշանացանկը: Առաջինում ընդգրկված են շուրջ 1000 արձանագրություն և մենանշան, որոնց զգալի մասը հրատարակվում են առաջին անգամ: Նշանացանկում բերված են այսօր հայտնի շուրջ 250 մեհենագրեր, տրված են դրանց տարբերակները, պատկերային, իմաստային և հնչյունային նշանակությունները (եթե հայտնի են), նշվում են այն արձանագրությունները, որոնցում վկայված են:

Ատենախոսության թեմայով հրատարակված են.

1. Վանի թագավորության մեհենագրերը. ընդհանուր բնութագիրն ու վերծանության բանալին.-«Հանդես Ամսօրեայ», 1996, թիվ 1-12, էջ 360-403
2. Դիտողություններ ուրարտական մեհենագրության ծագման վերաբերյալ.- Երիտասարդ արևելագետների 17-րդ գիտական նստաշրջան, Ձեկուցումների թեզեր, Ե., 1996, էջ 11-13
3. «...Դրոշմեալ զանուն կռապաշտ թագավորացն Հայկազանց».- «Գարուն», 1996, 8, էջ 68-71
4. Վանյան (ուրարտական) մեհենագրության լեզուն.- «Գարուն», 1996, 10, էջ 38-40
5. Հատուկ անունների գրության սկզբունքները ուրարտական հիերոգլիֆիկայում. - Երիտասարդ արևելագետների 18-րդ գիտական նստաշրջան, Ձեկուցումների թեզեր, Ե., 1997, էջ 24-25

Артак Ерджаникович Мовсисян
Иероглифическое письмо Ванского царства
(Биайнили, Урарту, Арарат)

Р Е З Ю М Е

В диссертации изучается одна из письменных систем Армянского нагорья и Древнего Востока - иероглифика Ванского царства (Биайнили, Урарту, Арарат). Несмотря на свою значимость как с точки зрения исследования

дохристианской культуры Армении, так и письменных систем вообще (грамматологии), названная письменность до сих пор оставалась нераспиврованной и малоизученной.

Работа состоит из введения, пяти глав, заключения, списков сокращений и использованной литературы. В конце работы дано приложение- Корпус иероглифических надписей и монограмм Ванского царства и Список иероглифических знаков.

Во введении представлены краткая характеристика биайно-урартской иероглифики, цель и задачи исследования.

Первая глава посвящена истории изучения проблемы. В первой части главы вкратце излагается картина археологических находок иероглифических памятников, из которой становится ясным, что изучаемая письменность применялась на обширной территории Армянского нагорья (исключая западную часть - долину Евфрата) и южного региона бассейна Урмийского озера (территория Маннейского царства). Во второй части приводятся исследования, проведенные в области изучения письменной системы, которые явно устарели и нуждаются в пересмотре. В третьей части представлена работа автора: собрание и обобщение опубликованного материала, изучение и публикация многочисленных памятников, хранящихся в музеях Республики Армения, изучение на основе всего собранного материала письменной системы и иных проблемных вопросов, работа по направлению расшифровки и толкования иероглифов Ванского царства.

Во второй главе (которая состоит из пятнадцати параграфов) дана общая характеристика биайно-араратской иероглифики. Устанавливается, что этой письменной системе была свойственна словесно-слоговая передача речи, в ней употреблялись детерминативы, лигатуры, цифровые и

вспомогательные знаки, она применялась в IX-VI вв. до Хр., однако можно предположить, что ее создание произошло раньше. Из всех современных письменностей биайно-урартская иероглифическая письменность более близка хетто-лувийской иероглифике.

Третья глава посвящена проблеме расшифровки. В первом разделе главы рассматриваются прежние попытки расшифровок (А.А.Барсебян, А.А.Вайман) и толкования отдельных иероглифов, в результате которых были объяснены всего несколько знаков, обозначающих цифры и меры емкости. Во втором разделе изложен опыт расшифровки автора, которая проводилась двумя этапами (1995 и 1997 гг.). В результате расшифровки стало возможным чтение трех собственных имен, написанных слоговой передачей, многих словесных знаков и некоторых коротких посвященных надписей. В общем итоге работа автора по расшифровке охватывает около пятидесяти иероглифических знаков.

В четвертой главе рассматривается вопрос языка иероглифики Ванского царства, в той мере, в какой для этого дают основания результаты расшифровки. Отмечается, что как во многих древневосточных письменных системах, так и в биайно-урартской иероглифике широко употреблялись принципы акрофонии и звукового ребуса. Анализ применения этих принципов в свете данных всех известных языков, распространенных в Ванском царстве и соседних странах, приводит к выводу, что наиболее вероятным кандидатом языка биайно-араратской иероглифики, является староармянский (в отличие от древнеармянского - грабара, который засвидетельствован начиная с V века). В пользу такого решения вопроса могут свидетельствовать также этимология многих топонимов и теонимов Ванского царства

на почве армянского языка и некоторые другие факты.

Пятая глава посвящена определению места биайно-урартской иероглифики в истории развития знаковых и письменных систем Армянского нагорья. По мнению автора, иероглифика Ванского царства является третьей ступенью развития пиктографии Армении, которая как система рисуночных знаков возникла в конце каменного века, а с III тыс. до Хр. превращается в письменную систему, знаки которой во II и в начале I тыс. до Хр. становятся линейными. Биайно-урартская система подверглась влиянию хетто-лувийской иероглифики, которая в XII-VIII вв. до Хр. применялась на западе Армянского нагорья (долина реки Евфрат), но отличается от последней многими особенностями. Ряд биайнийских иероглифических знаков продолжает употребляться в Армении и после принятия христианства как государственная религия (301 г.) по сей день в качестве "магических", "колдовских" знаков. В средние века списки этих знаков встречаются в армянских рукописях как письмена "наших предков", а некоторые из них выступают в качестве знаков армянских мастеров-ремесленников и т.д.

В заключении представлены общие итоги и выводы исследования, выявлены трудности, которые имеются на сегодняшний день, а также отмечены успешные шаги, открывающие новые перспективы в области исследования проблемы.

Artak E. Movsisyan
The Hieroglyphic Writing of Van Kingdom
(Biainili, Urartu, Ararat)

